ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ
ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

| | |
|---|---|
| **Կազմակերպության տվյալներ**<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ. հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com |
| | |
| **Հետազոտության թեմա/վերնագիր**<br>• Հետազոտության թեմա | ՏՀՏ գործիքների կիրառումը պատմության դասին: |
| | |
| **Ուսուցչի տվյալներ**<br>• Ա. Ա. Հ.<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Տերյան Լիանա Հովհաննեսի<br>Մանկավարժ<br>Պատմություն,հասարակագիտություն<br>7-12-րդ դաս. |
| **Ուսումնական հաստատության տվյալներ**<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե (տնօրինության)<br>• Web կայքի հասցե | Կոտայքի մարզ,Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց<br>geghashen@schools.am |

Բովանդակություն

## Բովանդակություն


........................................................................................................................................................*1*

**Հետազոտական աշխատանք** 1

**Տիտղոսաթերթ** 1

**Բովանդակություն** 2

**Ներածություն** 3

**SՅS –ի կիրառման արդյունավետությունը** 5

**SՅS-ի կիրառումը դասապրոցեսում**---------------------------------------------------------------- 8

**Օրինակ ,որը կիրառվել է իմ կողմից 9-րդ դասարանում**_______________________**11**

**Եզրակացություն** ---------------------------------------------------------------------------------**16**

Օգտագործված գրականության ցանկ-------------------------------------**17**

Ներածություն

| | |
|---|---|
| **Նպատակը եւ հետազոտական հարցը** | Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել և ներկայացնել,թե ինչպես է ՏՀՏ գործիքների կիրառումը ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնում պատմության դասը:<br>Այդ նպատակով հետազոտական հարցը սահմանվել է այսպես՝<br>Ինչպես ՏՀՏ գործիքների կիրառմամբ ավելի հետաքրքիր և արդյունավետ անցկացնել պատմության դասը 9-12-րդ դասարաններում: |
| | |
| **Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար** | Պատմության նկատմամբ հետաքրքրությունը սովորողների մեծամասնության մոտ կախված է նրանից, թե ինչ արդյունավետ մեթոդներով է ընթանում ուսուցման գործընթացը: Անհրաժեշտ է մտածել բոլոր աշակերտների ներգրավածությունը ապահովելու մասին և օգտագործել այն որպես մեկնարկային<br>կետ հետաքրքրության առաջացման և զարգացման համար, խորացնել<br>ճանաչողական հետաքրքրությունը:<br><br>ներգրավածությունը ապահովելու մասին և օգտագործել այն որպես մեկնարկային |

| | |
|---|---|
| | կետ հետաքրքրության առաջացման և զարգացման համար, խորացնել ճանաչողական հետաքրքրությունը: |
| | |
| **Ո՞ր առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը** | Թվային և մեդիա կարողունակություն |

| | |
|---|---|
| | |
| **Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին** | Բոլոր,հատկապես ՏՀՏ վերապատրաստման ժամանակ,մեդիագրագիտության : |

# Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտությունների ց,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

**ՏՀՏ գործիքների կիրառումը պատմության դասին:**

Պատմական կրթությունն ապահովում է պատմական անցյալի իմաստավորումը, սովորողների աշխարհայացքի ձևավորումը, ճանաչողական ինքնուրույնության և առողջ դատողության զարգացումը: Այսօր խիստ կարևորվում է պատմական կրթության որակի և արդյունավետության բարձրացումը: Այդ գործում վճռական նշանակություն ունեն ուսուցման նորագույն միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը (համակարգիչ, համացանց, էլեկտրոնային դասագիրք, լազերային սկավառակ նայլն): Արդի հարափոփոխ դարաշրջանում, երբ տեղեկատվական հեղեղը ողողել է ամբողջ աշխարհը, նոր խնդիրներ են դրվում հասարակության առջև, որոնց լուծումից է կախված մատաղ սերնդի վաղվա օրը: Հաջողությամբ արձագանքելով ժամանակի մարտահրավերներին՝ կրթության ոլորտում կատարված բարեփոխումները նպաստավոր

պայմաններ ստեղծեցին ուսման որակի բարձրացման, շարունակական կրթության ապահովման, սովորողների արագ սոցիալականացման, նրանց ինքնուրույնության և ակտիվության խորացման համար: Ժամանակակից կրթության առջև ծանրացած խնդիրների լուծման գործում մեծ է պատմական կրթության դերն ու նշանակությունը:

Համակարգչին տիրապետելը ավելի դյուրին է դարձնում պատմության ուսուցման գործընթացում սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը և համակարգված գիտելիքների ընկալումը նրանց կողմից: Եթե ինքնուրույն աշխատանքի ավանդական մեթոդները ապահովում էին ավելի շատ տեսական գիտելիքներ, ապա նոր տեխնոլոգիաների շնորհիվ արդի մեթոդները նպատակաուղղված են տեսական գիտելիքները տարբեր իրավիճակներում կիրառելուն: Ուստի դասապրոցեսը ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է համատեղել ուսուցման արդի և ավանդական մեթոդները: Այս պայմաններում ուսուցիչը պետք է փորձի համակարգչային տեղեկատվության համակարգման միջոցով նպաստել սովորողների մոտ համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է ՏՀՏ-ի միջոցով ստեղծել նոր ուսումնական նյութեր և ուսումնազննական միջոցներ:

Դրանք նոր հնարավորություններ են ստեղծում զննականության ապահովման և սովորողների ինքնուրույն աշխատանքների արդյունավետության բարձրացման համար: Զննականության սկզբունքը 17-րդ դարում ձևակերպել և հիմնավորել է Յ. Ա. Կոմենսկին: Նրան է պատկանում <<դիդակտիկայի ոսկե կանոնը>>, որը պահանջում է ուսուցմանը ներգրավել բոլոր զգայարանները: Այդ սկզբունքը արդիական է նաև մեր օրերում:

| | |
|---|---|
| Օգտագործված մեթոդները | Նոր թեմայի հաղորդումը դասարանում ՏՀՏ գործիքների կիրառմամբ ավելի արդյունավետ  է ,քան առանց դրանց: Հայոց պատմություն 9-րդ դասարան<br>Թեմա ՝ Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին:<br>Դասի նպատակը ՝ուսուցանել թեման և հասնել նրան ,որ սովորողներն իմանան Հայրենական պատերազմը երբ է սկսվել,պատճառները,ընթացքը և ավարտը:<br>Դասի համար անհրաժեշտ է համակարգիչ,պրոյեկտոր,նախորոք պատրաստված սահիկաշար /իմ կողմից/,թուղթ,գրիչ:<br>Մտագրոհի միջոցով փորձում եմ հասկանալ աշակերտների գիտելիքները Հայրենական պատերազմի մասին՝պատասխանները գրելով էլեկտրոնային գրատախտակին:<br>Իմ կողմից նախապես պատրաստվել է սահիկաշար PowerPoint ծրագրով  ,որում մանրամասն ներկայացված է թեման,որի մասին խոսելու եմ դասարանում :<br>Աշակերտները մեծ ուշադրությամբ հետևում են սահիկաշարին և լսում ինձ:Սահիկաշարով ներկայացվում է թեման .պատերազմի սկիզբը,ընթացքը,ավարտը:<br>Հայ ծողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին:<br>Սահիկաշարով ներկայացնում հայ ժողովրդի մարշալներին և հերոսներին,դիվիզիաները և նրանց մարտական ուղին:<br>https://www.youtube.com/watch?v=FLsX_2rECNM<br>Ապա կատարում ենք անդրադարձ,պարզելու համար նյութի յուրացման աստիճանը:Դասի վերջում   տրվում են հարցեր.<br> 1.Հետաքրքի՞ր էր դասը :<br>2.Դսաի ո՞ր մասը ձեզ դուր եկավ և ինչու:<br>3.Կցանկանայի՞ք ավելի հաճախ նման դասեր կազմակերպել:<br> Ապա աշակերտներին եմ ներկայացնում Հայրենական պատերազմին նվիրված մի քանի ֆիլմերի անուններ ,որոնք նրանք պետք է դիտեն,մեկն էլ ընտրում ենք դասարանում դիտելու համար:<br>Ապա աշակերտներին եմ ներկայացնում Հայրենական պատերազմին նվիրված մի քանի ֆիլմերի անուններ ,որոնք նրանք պետք է դիտեն,մեկն էլ ընտրում ենք դասարանում դիտելու համար:<br>Թեմայի ամփոփում՝Դիտում են ընտրված ֆիլմից հատվածներ,քննարկում դրանք: Մինչև ֆիլմը դիտելը անհարժեշտ է կատարել հարցադրումներ, օրինակ ՝<br>-Դատելով ֆիլմի վերնագրից ինչի՞ մասին է այն լինելու: |

| | |
|---|---|
| | |
| | |
| **Իրականացման ժամանակահատվա ծը** | 2 Շաբաթ |
| | |

| | |
|---|---|
| **Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/** | 9-12-րդ դասարանի աշակերտներ |

## Եզրակացություններ, առաջարկություններ

### Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին

Դասարանում անցկացվող հոգեբանական և մանկավարժական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հիմնական դպրոցում ՏՀՏ հնարավորությունների օգտագործումը նպաստում է. Սովորելու մոտիվացիայի բարձրացում, Բարձրացնելով կրթական գործընթացի արդյունավետությունը `տեսանելիության բարձր աստիճանի պատճառով, ճանաչողական գործունեության բարձրացում, դպրոցականների որակյալ կատարողականի բարձրացում, Տեսողական-փոխաբերական, տեղեկատվական մտածողության զարգացում, Կրտսեր աշակերտների մեջ ինքնակրթության և ինքնատիրապետման հմտությունների զարգացում, Դասում ավելի փոքր աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության բարձրացում, Ուսուցման հարմարավետության մակարդակի բարձրացում: Այս ամենը թույլ է տալիս խոսել ուսուցչի աշխատանքի որակի բարձրացման մասին: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դասերը ոչ միայն ընդլայնում և համախմբում են ձեռք բերված գիտելիքները, այլև զգալիորեն բարձրացնում են աշակերտների ստեղծագործական և մտավոր ներուժը: Քանի որ նրանց մեջ ապացուցելու երևակայությունն ու ցանկությունը մեծ է, արժե սովորեցնել հնարավորինս հաճախ արտահայտել սեփական մտքերը, ներառյալ տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ;

ՏՀՏ-ն կարող է նաև շատ բան առաջարկել այն բանի շնորհիվ, որ այն շատ բազմակողմանի ռեսուրս է և կնպաստի յուրաքանչյուր առարկայի ինչպես ուսուցման, այնպես էլ ուսումնառության գործընթացներին `դրդելով ուսանողներին ցանկանալ սովորել և կարողանալ աստղ ունենալ իրենց ուսման մեջ: **որպես ակտիվ ուսուցում, քան պասիվ**:

Վստահ եմ ,որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կարող է փոխակերպել ավանդական դպրոցական առարկաների ուսուցումը՝ հիմնավորելով երեխաների աշխատանքը, օպտիմալացնելով ուսումնական նյութի ընկալման և մտապահելու գործընթացները և որ ամենակարևորն է՝ սովորելու նկատմամբ երեխաների

հետաքրքրությունը բարձրացնելով անընդհատ ավելի բարձր մակարդակի: ՏՀՏ -ն իրենց աշխատանքում օգտագործող ուսուցիչները եկել են այն եզրակացության,որ տեղեկատվական տեխնոլոգիաները միայն փնտրողների համար են, այն ուսուցիչների համար են, ովքեր սիրում են սովորել նոր բաներ: Նրանք նրանց համար են, ովքեր անտարբեր չեն իրենց մասնագիտական կարողությունների մակարդակի նկատմամբ, ովքեր անհանգստացած են, թե որքանով է նա ՝ ժամանակակից դպրոցի ուսուցիչը համապատասխանում գալիք դարի պահանջներին: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ դասարանում ՏՀՏ կիրառմամբ կրթական գործընթացը միտված է տրամաբանական և քննադատական մտածողության, երևակայության և անկախության զարգացմանը: Երեխաները հետաքրքրված են, ներգրավված ստեղծագործական որոնման մեջ և ոչ միայն երեխաները, այլև՝ նրանց ծնողները:

Ուսուցիչը ներկայումս կարիք ունի սովորել օգտագործել համակարգչային տեխնոլոգիան, ճիշտ այնպես, ինչպես նա այսօր օգտագործում է գրիչ կամ կավիճ դասի վրա աշխատելու համար:Կարողանա ստեղծել սեփական տեղեկատվական տեխնոլոգիաներ և հմտորեն կիրառել ձեռք բերված գիտելիքները և հմտությունները՝ դասի մեթոդաբանությունը կատարելագործելու համար: Ուսուցչի համար համակարգիչն այլևս շքեղություն չէ ,այլ ՝ՊԱՐՏԱԴԻՐ: Մարդը,ով տիրապետում է տեխնոլոգիային և տեղեկատվությանը,ունի այլ,նոր ոճ,կարող է այլ կերպ մոտենալ ծագած խնդրի գնահատմանը՝դրանց կազմակերպմանը:Տեղեկատվական տեխնոլոգիաները Հայաստանում ժամանակակից դպրոցում պետք է դիտարկել որպես դասվանդման մեթոդներից մեկը:

Դիմագրավելով պատմության արհավիրքներին ու պատերզմներին՝ յուրաքանչյուր հայիս պարտք է յուրացնել , զարգացնել ու հզորացնել մեր երկիրն ու կերտել այնպիսի պատմություն, որով կհպարտանան դեռ բազում սերունդներ: Ուստի յուրաքանչյուր ուսուցչի պարտքն է ժամանակակից մեթոդներով այնպիսի դասպրոցես ստեղծել , որի ընթացքում աշակերտին հնարավորություն կտրվի մեծ հետաքրքրությամբ լսել դասն ու լինել դրա անմիջական մասնակիցը:

Գրականության ցանկ

1.Պատմության դասավանդման բազմատեսանկյուն բազմատեսանկյուն մոտեցումը. ուսուցչի ձեռնարկ:

2. **Յան Ամոս Կոմենսկու «Մեծ դիդակտիկա»**

3.Համացանց

4.Ինֆորմատիկայի դասագիրք 7-րդ դասարան 2017թ